ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԸ ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Ս. Դ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Հովսեփ Արղությանի օրագրությունները և նամակները XVIII դարի 80—90-ական թթ. հայ-ռուսական հարաբերությունների պատմության կարևորագույն աղբյուր են, որում արտացոլվել է նաև Ռուսաստանի օգնությամբ հայկական թագավորության վերականգնման հարցը։

1780-ական թթ. աշխուժացան հայ-ռուսական քաղաքական հարաբերությունները[1]։ Դա պայմանավորված էր Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերում (հատկապես Անդրկովկասում նրա ակտիվացմանը զուգընթաց) հայերին և Հայաստանին հատկացված դերով և Ռուսաստանի օգնությամբ թուրք-իրանական տիրապետությունից ազատագրվելու հայ ժողովրդի ձգտմամբ։ Ժամանակի ամենաաչքի ընկնող պետական գործիչ Գ. Ա. Պոտյոմկինը որոշակի հետաքրքրություն հանդես բերեց Հայաստանի և հայերի նկատմամբ։ Դրանից ոգևորված հայ գործիչները, առանձնապես Հ. Արղությանը, սկսեցին ջանքեր գործադրել Հայաստանն ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու ուղղությամբ։

Արղությանի օրագրություններից հայտնի է դառնում, որ 1780 թ. հունվարի 1-ին Արղությանին այցելել է ռուսական բանակի գնդապետ Ի. Վ. Գոբիչը և հայտնելով, «զգնալն իրեանց ի վերայ պարսից առ ի տիրել զծովեզերեայ տեղիսն», մանրամասն հարց ու փորձ է արել տարածաշրջանի վերաբերյալ[2]։ Հասկանալի է, որ ռուս գործիչները տեղեկություններ էին ստանում նաև այլ աղբյուրներից։ Այդ տեսակետից Արղությանին դիմելը լրացուցիչ տվյալներ ստանալու նպատակ էր հետապնդում և պայմանավորված էր Արղությանի լավատեղյակությամբ և վստահելի լինելով։ Այսպես, հունվարի 2-ին Հովհաննես Լազարյանի հետ Արղությանին է այցելում Ա. Վ. Սուվորովը և ավելի մանրամասնորեն հետաքրքրվում Հայաստանի կացությամբ, հուսադրելով, որ իրենք Հայաստանում «իշխանություն են նորոգելու»[3]։ Իսկ հաջորդ օրը Լազարյանին և Արղությանին իր մոտ է հրավիրում իշխան Գ. Պոտյոմկինը, որի հետ Արղությանը կապեր էր հաստատել դեռևս Ղրիմի հայ բնակչության Ռուսաստան գաղթեցման առիթով[4]։ Ահա թե ինչ է պատմում Արղությանը Պոտյոմկինի հետ ունեցած հանդիպման մասին իր օրագրությունում, որը այս և վերոհիշյալ հանդիպումների վերաբերյալ միակ աղբյուրն է.

---

1 *Տե՛ս* А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ереван, 1947; М. Г. Нерсисян. Из истории русско-армянских отношений. Книга первая. Ереван, 1956; Армяно-русские отношения в XVIII веке (1760—1800 гг.). Сборник документов, т. IV (*այսուհետև՝* Армяно-русские отношения, IV), Ереван, 1990, с. 5—13.

2 *Տե՛ս* Армяно-русские отношения, IV, с. 152.

3 *Նույն տեղում, էջ 152—153։*

4 *Պոտյոմկինի և Սուվորովի բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ Արղությանին հաջողվեց մեղմացնել հայ գաղթականների ծանր վիճակը և մի շարք արտոնություններ ստանալ նրանց համար։ Մանրամասն տե՛ս* М. Г. Нерсисян. Указ. соч., с. 15, 16, 37—42.

«Ի միասին գնացաք առ նա և բազում ինչ խօսեցաք վասն այցելութեան ազգիս մերոյ և աշխարհին, և ինքն յետ բազում հարցաքննութեանցն զկացութենէ ազգին մերոյ և սրբոյ Աթոռոյն և զկաթողիկոսէն. և մեր թախանձելն նորոգել ի մեզ զմասնաւոր տէրութիւն ի մեծն Հայաստան ի քաղաքն Երևան, պատասխանեաց, թէ կարելի է, բայց պիտոյ է պատրիարգն ձեր քանեօք իշխանօք խնդիր ի գործ ածիցեն վասն փրկութեան ձերոյ, որ մեք այնու ի յօգնութիւն ձեզ եկեսցուք... հրամայեաց և աղայ Յովհան[ն]էսին գրել ի Ջուղայ էմին աղային, որ եկեսցէ...»[5]։

Այսպիսով, հայկական պետությունը վերականգնելու խնդրանքին Պոտյոմկինը պատասխանել է, թե «կարելի է», ավելացնելով, որ կաթողիկոսը և իշխանները նման խնդրանքով պետք է դիմեն ռուսական կառավարությանը։ Նպատակը երևի համոզվելն էր, որ դա իրոք ողջ հայ ժողովրդի ցանկությունն էր, ինչպես նաև Հայաստան զորք ուղարկելիս հիմք ունենալը։ Ուշագրավ է, որ նա հանձնարարել է Հնդկաստանից կանչել Հովսեփ էմինին, որը, ինչպես հայտնի է, XVIII դարի 60-ական թթ. Հայաստանն ազատագրելու ուղղությամբ լայն գործունեություն էր ծավալել՝ ընդհուպ մինչև զինված խմբեր կազմավորելը։ Այդ տեսակետից, և զատելով խոսակցության թեմայից, էմինի խնդիրներից մեկն էլ հայերի զինված պայքարի կազմակերպումը կարող էր լինել։ Սա ցույց է տալիս, որ Պոտյոմկինը ցանկալի էր համարում հայերի զինված պայքարը, այդպիսով ակտիվ դեր վերապահելով հայ ժողովրդին իր հայրենիքի ազատագրման գործում։ Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ հունվարի 13-ին Սուվորովը իր մոտ է հրավիրում Լազարյանին ու Արղությանին և մանրամասն տեղեկանում Արցախի մելիքների կացության և հատկապես նրանց ռազմական ուժի վերաբերյալ[6]։ Ինչ վերաբերում է էմինին ուղղված նամակի ճակատագրին, ապա այդ մասին դարձյալ իմանում ենք Արղությանից։

Հետագայում, 1790-ական թթ., երբ ռուսական զորքերի Անդրկովկաս գալը շարունակում էր օրակարգում մնալ, Արղությանն աշխատում էր Պոտյոմկինին փոխարինած Պ. Զուբովին շահագրգռել Հայաստանի ազատագրման պոտյոմկինյան ծրագրերով և հատկապես համոզել նրան՝ հայերին մասնակից դարձնել արշավանքին։ 1793 թ. մայիսին Պ. Զուբովին ուղղված նամակում պատմելով էմինի և նրա կատարած գործի մասին, Արղությանը հայտնում էր, որ 1780 թ. Պոտյոմկինը կարգադրել էր Ռուսաստան կանչել էմինին, բայց այն ժամանակ լուր էր տարածվել, թե էմինը ողջ չէ։ Սակայն, ինչպես գրում էր Արղությանը, էմինը ողջ է եղել և իմանալով այդ մասին, 1790 և 1791 թթ. գրել էր Արղությանին՝ պատրաստակամություն հայտնելով երկու որդիների հետ ծառայել Ռուսաստանին՝ իր հայրենիքի փրկությանը նպաստելու համար[7]։ Արղությանը պատմում է էմինի մասին, նրան համարելով հայ ազատագրական պայքարի և հայկական պետականության վերականգնման գաղափարի նվիրյալ։ Ինչ վերաբերում է Սուվորովին, ապա նա շատ էր ոգևորված Հայաստանի ազատագրման գաղափարով և եռանդով էր նախապատրաստվում արշավանքին, սակայն նրա հրամանատարությամբ արշավանքը տեղի չունեցավ[8]։ Բայց Պոտյոմկինը չէր հրաժարվել իր ծրագրերից և արշավանքի հարցը շարունակում էր օրակարգում մնալ։ 1782 թ., կովկասյան գծի զորքերի հրամանատար Պ. Պոտյոմկինը, որը ցուցում էր ստանում Գ. Պոտյոմկինից, Արղությանին ուղղված նամակում, ուր մի շարք հարցադրումներ կային Հայաստանի և Անդրկովկասի վերաբերյալ, ամենից առաջ այն հարցն էր բարձրացնում, թե արդյո՞ք հայ ժողովուրդը պատրաստ էր

5 Армяно-русские отношения, IV, с. 153.

6 Տե՛ս նույն տեղում։

7 Տե՛ս նույն տեղում, էջ 398։

8 Մանրամասն տե՛ս М. Г. Нерсесян. А. В. Суворов и русско-армянские отношения (այսուհետև՝ А. В. Суворов..). Ереван, 1981, с. 43—71.

պայքարել իր ազատագրման համար. «Մեծ Հայաստանի հողը, ընկնելով օրենքով անհավատ և վարվեցողությամբ բարբարոս թուրքերի և պարսիկների ձեռքը, երկար անազատությունից հետո պահպանե՞լ է արդյոք ազատ ոգու ուժը։ Ճնշումը և զանազան հալածանքները չե՞ն սպանել արդյոք նրանց սրտերում ազնիվ զգացմունքները։ Բանականության ուժը, օրենքը և հավատի ամրությունն արդյո՞ք այնքան են գործում, որպեսզի հոգու ներքին ցանկությունը լինի թոթափել իրենց ճնշող լուծը»[9]։

Պ. Պոտյոմկինի այս հարցադրումը հետաքրքիր է նրանով, որ դրանում հիշատակվում էր «Մեծ Հայաստանը», որով դրվում էր նաև Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցած հայկական տարածքների հարցը՝ վկայելով այդ ուղղությամբ ևս Գ. Պոտյոմկինի որոշակի դիտավորությունների մասին։ Իսկ դրա համար պահը կարող էր նպաստավոր դառնալ նրանով, որ Ղրիմի հարցի հետ կապված, Թուրքիայի կողմից Եվրոպական մասում ռազմական գործողություններ սկսելու դեպքում, Պոտյոմկինը նպատակահարմար էր գտնում անսպասելի հարված հասցնել վերջինիս նրա ասիական սահմաններում, որին էլ հավանություն էր տալիս կայսրուհին։ 1783 թ. ապրիլի 8-ին Գ. Պոտյոմկինին ուղղված նրա հրահանգում, ուր տեղ էին գտել Պոտյոմկինի այս մտահղացումները, նշված էր, որ հարկավոր էր գրավել Դերբենտը, օգնել Հերակլին և հայերին, ապահովելով նրանց մարզերի անկախությունը, որոնցից պետք է Ռուսաստանի համար ամուր պատնեշ կազմավորվեր, իսկ թուրքերի հետ պատերազմի դեպքում վրացիների և հայերի հետ միասին, որոնք պատրաստ էին զենքի դիմել ազատության և անկախության հույսով, ուժգին հարձակում կազմակերպել թուրքական մարզերում[10]։ Բնորոշ է, որ 1796 թ. արշավանքի ժամանակ, որն ուղղված էր բացառապես Աղա Մոհամմեդի դեմ և որի ժամանակ Ռուսաստանն աշխատում էր Թուրքիային դժգոհության առիթ չտալ, արշավանքին հայերի մասնակցության վերաբերյալ հարցը ընդհանրապես չբարձրացվեց, թեև Արղությանը առիթը բաց չէր թողնում ինչպես այդ խնդիրը, այնպես էլ Արևմտյան Հայաստանի հարցը շոշափելու համար[11]։ Ավելին, Ղուկաս կաթողիկոսին ուղղված նամակում արշավանքի հրամանատար Վ. Զուբովը խնդրում էր կաթողիկոսին՝ դիմել հայ ժողովրդին «հանգստություն պահպանելու» կոչով, պատճառաբանելով, որ իրենք եկել են ոչ թե տապալելու, այլ հաստատելու տեղի իշխողներին[12]։ Ինչպես տեսնում ենք, Զուբովը անհանգստանում էր, որ ռուսական զորքի ներկայությունից ոգևորվելով հայ ժողովուրդը կարող էր զենքի դիմել, որը այդ պահին չէր մտնում ռուսական կառավարության պլանների մեջ։ Սա ցույց է տալիս, որ տարածաշրջանում Ռուսաստանի խնդիրների փոփոխությունից կախված փոխվում էին նաև Հայաստանի անկախության վերականգնման և հայ ժողովրդի զինված պայքարի վերաբերյալ ռուսական կառավարության ծրագրերը։ Իսկ 1782 թ. դեկտեմբերի 28-ին Պ. Պոտյոմկինին ուղղված պատասխան նամակում Արղությանը գրում էր, որ հայերը, «ոգու ամրությունը և Քրիստոսի հավատի նկատմամբ ջերմեռանդությունը անսասանորեն պահպանում են... Չնայած շատ են ցանկանում ազատագրվել այդ լծից, բայց անհավատների ներշնչած սարսափը տկարացնում է նրանց և նրանց ուժը մատնում անգործության։ Շատ հնարավոր է, որ այս նոր ձեռնարկումը նորոգի նրանց սրտերում այն զինական կրակը, որով հնուց շնչում էին իրենց նախ-

---

9 Армяно-русские отношения, IV, с. 200—201. *Տե՛ս նաև Լեո. Երկերի ժողովածու., հ. 3, գ. 2, էջ 342։*

10 *Տե՛ս* О. П. Маркова. Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. М., 1966, с. 160—161.

11 *Տե՛ս* Армяно-русские отношения, IV, с. 397—398, 415, 435—439.

12 *Տե՛ս* Ս. Գ. Ղուկասյան. *Հովսեփ Արղությանը ռուսական զորքերի 1796 թ. անզբկովկասյան արշավանքի ժամանակ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 3, էջ 92—93։*

նիները»[13]։ Այսպիսով, Արղությանը ընդգծում էր, որ հայերի մեջ վառ է ազատասիրական ոգին և նրանք պատրաստ են պայքարել, բայց միայնակ, առանց Ռուսաստանի օգնության, հայ ժողովուրդը ի վիճակի չէ այդ պայքարում հաղթանակ ակնկալել։ Եվ, որպեսզի հայերն ավելի ոգևորվեին և ակտիվորեն մասնակցեին արշավանքին, Արղությանը նպատակահարմար էր գտնում, որ ռուսական բանակում ներկա լինեին հայ ժողովրդի շրջանում հեղինակություն վայելող երևելի հայազգի գործիչներ։ Պ. Պոտյոմկինին ուղղված նամակում նա նշում էր Հովհաննես Լազարյանի անունը, այնուհետև թվարկելով նաև ռուսական ծառայության մեջ գտնվող հայազգի մի շարք զինվորականների անունները[14]. «Զի յորժամ լինիցէր նա ընդ քեզ, որպէս երբեմն ազգք մեր բորբոքեցան առ Էմին աղայն, զորմէ յառաջոյն էիմ դրեալ, առավելապէս առ Իվան Լազրիչն ոչ միայն նոքա, որք ի ձեռս պարսից կան, այլև շուրջ Արարատեամբ եղեալ հայքն, որք են ընդ ձեռամբ օսմանցոց, որք բնակին թէպէտ ի Հայաստան, բայց ի նորունց անուանին տեղիք նոցա Քրիստան, ի Բայազիդ, ի Վան, ի Մոքք, ի Յարզրում և ի շրջակայս նորա, և այլ ուրեք, թող զԱնատոլի եղեալսն, որք են անթիւք», գրում է Արղությանը[15]։

Իր առաջարկը Արղությանը հիմնավորում էր նաև նրանով, որ այդ անձինք, լավատեղյակ լինելով իրենց հայրենակիցների լեզվին և նիստուկացին, հնարավորություն կունենային օգտակար լինել ռուսական հրամանատարությանը[16]։ Կարծում ենք, սակայն, նա շահագրգռված էր դրանում, որովհետև վերջիններս կարող էին ամենից առաջ օգտակար լինել իրենց ազգին և հնարավորին չափ նպաստել, որպեսզի ռուսական հրամանատարությունը հայանպաստ դիրքորոշում ունենար։ Նա հույս էր փայփայում, որ հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը ռազմական գործողություններին կգնահատվեր ռուսական կառավարության կողմից և հաշվի կառնվեր Հայաստանի հետագա ճակատագիրը և կարգավիճակը որոշելիս։ 1784 թ. հունվարի 30-ին Արղությանը Պ. Պոտյոմկինին արդեն տեղեկացնում էր, որ բազմաթիվ ռուսահայ կամավորներ միացել էին հայազգի կապիտան Բ. Խաստատովին և պատրաստ էին ծառայել ռուսական հրամանատարության ներքո՝ իրենց հայրենիքի ազատագրմանը մասնակցելու համար[17]։

Այժմ տեսնենք, թե ինչպիսին էին հայկական պետականության վերականգնման վերաբերյալ Գ. Պոտյոմկինի պլանները և ինչ ընթացք դրանք ունեցան։ Արդեն նշվել է, որ ռուս գործիչները հատկապես հետաքրքրվում էին Ղարաբաղի կացությամբ, մասնավորապես մելիքների ռազմական հնարավորություններով, և Արղությանը մանրամասն տեղեկություններ էր հաղորդում նրանց։ Նույն հարցի մասին Պ. Պոտյոմկինի համար պատրաստած 1783 թ. հունվարի 28-ի փաստաթղթում Արղությանը գրում էր.

«Հնգեքին մելիքքն այնոքիկ ի բազմաց հետէ ինքնագլուխք էին և ունեք ոչ ուէին զհնազանդութիւն...։ Այնքան ունէին ազատութիւն, մինչ զի յորժամ... մեծ կայսրն Պետրոս յորժամ հաճեցուվ այցելութիւն առնել տարաբախտ երկրին մերոյ և դիմեաց ի Դարբանդ (Դերբենտ—Ս. Ղ.), լուեալ նոցա զայս երջանիկ լուրս ազատութեան, համաձայնեալ ամենեքեան 18 հազար երիտա-

13 Армяно-русские отношения, IV, с. 204.

14 Նույն տեղում, էջ 218—219։ 1784 թ. հոկտեմբերի 18-ին Հ. Լազարյանին Արղությանի գրած նամակից երևում է, որ նրանք նախապես պայմանավորվել էին այդ հարցի շուրջ։ Տե՛ս նույն տեղում, էջ 324։

15 Նույն տեղում, էջ 218—219։

16 Նույն տեղում, էջ 219։

17 Նույն տեղում, էջ 283։ Բ. Խաստատովի մասին տե՛ս М. Г. Нерсисян. А. В. Суворов..., с. 79—80.

սարդ արք պատերազմականք քաջք և արիասիրտք... աճապարէին իբրև զարծուիս առ մեծ կայսրն»[18].

Այնուհետև, նկարագրելով Փանահ խանի Ղարաբաղ ներխուժելու և այնտեղ հաստատվելու պատմությունը, ինչպես նաև մելիքների նկատմամբ նրա և Իբրահիմ խանի վարած ագրեսիվ քաղաքականությունը, Արղությանը գրում էր. «Բաց ի մելիք Շահնազարէն և ի տանէն իւրմէ, այլ մելիքքն և բոլոր բնակիչքն հնգերքին դաւառացս և հոգևորքն սոցա, եթէ զտին առիթ ինչ օգնութեան, ապստամբելոց են ի խանէն...»[19]. Եվ իրոք, Պետրոս Մեծից հետո այժմ էլ Պոտյոմկինի հետ հույսեր կապելով՝ մելիքները մի քանի անդամ դիմեցին Եկատերինա II կայսրուհուն և Գ. ու Պ. Պոտյոմկիններին Ղարաբաղ օգնական զորք ուղարկելու խնդրանքով, հավաստիացնելով, որ իրենք կմիանան վերջինիս[20].

Ղարաբաղի վերաբերյալ ինչպես վերոհիշյալ, այնպես էլ իր մյուս նամակներում, Արղությանը մշտապես ընդգծում էր, որ անդամ հայկական պետականության բացակայության պայմաններում Ղարաբաղը եղել է անկախ և ինքնիշխան և որ մելիքները բավական ուժ են ներկայացրել։ Վերոհիշյալ փաստաթղթում Արղությանը շեշտում էր նաև այն հանգամանքը, որ մելիքները, դեռևս Պետրոս Մեծի ժամանակներից, Հայաստանի ազատագրման հույսը կապել էին Ռուսաստանի հետ և որ Պետրոս Մեծն էլ նպատակ է ունեցել օգնության գալ հայ ժողովրդին։ Ստորև կտեսնենք, որ Արղությանի կողմից խնդիրը նման ձևով ներկայացնելը բավականին մեծ ազդեցություն է ունեցել Ղարաբաղի հարցի լուծման ընթացքի և կարգավիճակի վերաբերյալ Գ. Պոտյոմկինի արտահայտած դիրքորոշման վրա[21]։ Հ. Ռայնեդսի միտիայի վերաբերյալ կայսրուհուն հղած 1783 թ. փետրվարի 9-ի զեկուցագրում Գ. Պոտյոմկինը, պաշտպանելով Ղարաբաղ և Երևան զորք ուղարկելու գաղափարը, նշում էր, որ դա պետք է արվի «...անկախ նրանից հայերը կճանաչվեն որպես Ռուսաստանի հպատակներ, թե կտրվի նրանց պատշաճ տիրակալ...»[22]։

Էականը համարելով Ղարաբաղ և Երևան զորք ուղարկելը, Պոտյոմկինը երկու տարբերակներն էլ ընդունելի էր համարում՝ ընտրության իրավունքը վերապահելով կայսրուհուն կամ պարզապես հարցի վերջնական լուծումը թողնելով ժամանակին։ Նույն թվականի ապրիլի 6-ին Գ. Պոտյոմկինը արդեն կարգադրում էր Պ. Պոտյոմկինին. «Շուշու Իբրահիմ խանին պետք է տապալել, քանի որ դրանից հետո Ղարաբաղը կդառնա Ռուսաստանից բացի ուրիշ ոչ մեկից կախում չունեցող մարզ։ Դուք այդտեղ գործադրեք բոլոր միջոցները, որպեսզի այդ նոր մարզը ժողովրդի համար ամենաշահավետ ձևով կազմավորվի։ Այդպիսով և մյուս հայկական շրջանները կամ կհետևեն նրանց օրինակին կամ մեծաթիվ խմբերով կգան Ղարաբաղ»[23]։

Այսպիսով, Գ. Պոտյոմկինը ցանկանում էր Ղարաբաղը և մյուս հայկական տարածքները տեսնել որպես միայն Ռուսաստանից կախման մեջ գտնվող ուժեղ և հայաշատ շրջաններ։ Սակայն ընդամենը մեկ ամիս անց նա հրամայեց ձեռք չտալ խանին, քանի որ վերջինս դիմել էր Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու խնդրանքով։ Միաժամանակ կարգադրվում էր սիրաշահել հայերին, որպեսզի նրանք պատրաստ լինեին անհրաժեշտության դեպքում աջակցել տարածաշրջանում Ռուսաստանի շահերից բխող

---

18 Армяно-русские отношения, IV, с. 210—211.

19 Նույն տեղում, էջ 212։

20 Նույն տեղում, էջ 181—184, 222—229, 232—234, 247—251։

21 Այլ հարցերի կապակցությամբ ևս Արղությանի ներկայացրած փաստաթղթերը և գրանցում տեղ գտած առաջարկները հիմնականում հաշվի էին առնվում ռուս պաշտոնյաների կողմից, որը վկայում է Արղությանի ազդեցության և նրա վայելած մեծ հեղինակության մասին։

22 Армяно-русские отношения, IV, с. 217.

23 Նույն տեղում, էջ 239։

ձեռնարկումներին[24]։ Կայսրուհուն ուղղված զեկուցագրում նշելով, որ դեռևս նրանից հրահանգ չունենալով ինքը կարգադրել է հնազանդության բերել Իբրահիմ խանին, Գ. Պոտյոմկինը գրում էր. «Հարմար առիթի դեպքում նրա (Իբրահիմ խանի—Ս. Ղ.) մարզը, որը կազմված է հայերից, պետք է տալ ազգային կառավարման և այդպիսով Ասիայում վերականգնել քրիստոնեական պետություն, համաձայն ձերդ կայսերական մեծության իմ միջոցով հայ մելիքներին տված խոստումներին»[25]։

Այսպիսով, մինչ Անդրկովկասում նախատեսվող ծրագրի իրականացումը, Պոտյոմկինը ձեռնտու էր համարում տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցությունը ուժեղացնել դիվանագիտական միջոցներով, որոնցից մեկն էլ տեղի իշխողներին Ռուսաստանի հովանավորության տակ վերցնելն էր կամ այդպիսի հեռանկարով նրանց հնազանդության մեջ պահելը։ Եվ, չնայած Պոտյոմկինը չէր վստահում խանին, անմիջապես չբավարարելով հանդերձ նրա խնդրանքը, վերջնականապես չմերժեց, քանի որ բոլոր դեպքերում շահավետ էր Իբրահիմին կախման մեջ պահել։ Սակայն, ինչպես երևում է կայսրուհուն հղած նրա զեկուցագրից, Իբրահիմին իշխանազուրկ չանելը Պոտյոմկինը ժամանակավոր քայլ էր համարում, քանի որ Ղարաբաղի նկատմամբ նա ճանաչում էր միայն հայ ժողովրդի իրավունքները, Իբրահիմին համարելով ուզուրպատոր։ Կայսրուհուն ուղղված Գ. Պոտյոմկինի զեկուցագիրն ուշագրավ է նաև նրանով, որ դրանից որոշակիորեն երևում է, որ Եկատերինա II-ը նույնպես պաշտպանել է հայկական պետությունը վերականգնելու անհրաժեշտության գաղափարը։ Ինչ վերաբերում է Իբրահիմին ժամանակավորապես իշխանազուրկ չանելու մասին Գ. Պոտյոմկինի երկրորդ հրահանգին, ապա բացառված չէ, որ դա պայմանավորված էր նաև նրանով, որ չնայած իր մեծ լիազորություններին և կայսրուհու մոտ ունեցած վստահությանը, նա չէր կարող իրադրության փոփոխման պայմաններում միանձնյա որոշումներ կայացնել և գործադրել տալ իր նախորդ հրահանգը։

Եվ, այնուհանդերձ, նկատի ունենալով Պոտյոմկինի երկրորդ հրահանգը, պետք է նշել, որ Իբրահիմի դիմելը կայսրուհուն այդ պահին վճռորոշ նշանակություն ունեցավ, եթե, իհարկե, ռուսական զորքը իրոք պատրաստվում էր շարժվել Ղարաբաղ և այդ պատճառով միայն արշավանքը դադարեցվեց։ Իսկ որ Իբրահիմ խանի հետ հարաբերություններին Եկատերինա II-ը բավականին նշանակություն էր տալիս, վկայում է թեկուզ այն փաստը, որ խանի ներկայացուցչին ճոխ ընդունելություն ցույց տրվեց Պետերբուրգում[26]։ Բնականաբար, մելիքներն այդպիսով հայտնվում էին ավելի ծանր իրադրության մեջ, քան մինչև Պոտյոմկինի հետ հարաբերությունների մեջ մտնելը, քանի որ Իբրահիմը է՛լ ավելի ազատություն էր տալու իր ձեռքերին։ Դժվարին կացության մեջ էր հայտնվում նաև Հ. Արղությանը, քանի որ Պոտյոմկինի տված հույսերի համաձայն ինքն էլ հուսադրում էր մելիքներին, իսկ արդյունքը այդպես էլ չէր երևում։ Հասկանալով, որ Իբրահիմին հովանավորության տակ վերցնելու դեպքում մելիքները ավելի անպաշտպան էին դառնալու, 1784 թ. սեպտեմբերին Արղությանը գրում էր Գ. Պոտյոմկինին. «ԶՇուշու խանն եթէ ընկալնոց իցէք ի հովանաւորութիւն իւրոհւոյ կայսերական մեծութեան, խընդրեմք զմելիքսն մեր ուրոյն կարգավորութեամբ ընկալնուլ, ըստ բողոքի և աղաչանաց նոցա, որ մինչև յայս վայր խնդրեն, որ լինիցին նոքա ինքնագլուխ և միայն կախեալ ի հրամանս նորին արքայական մեծութեան Հերակլայ»[27], որն էլ, ի դեպ, նախատեսվում էր իրականացնել 1796 թ. արշավանքի ժամանակ[28]։ Այսպիսով, խոսքը ոչ թե առաջվա պես Իբրահիմին իշխա-

---

24 А. Р. Иоаннисян. Указ. соч,. с. 237.

25 Армяно-русские отношения, IV, с. 241.

26 Տե՛ս О. П. Маркова. Указ. соч., с. 184.

27 Армяно-русские отношения, IV, с. 321.

28 Տե՛ս Ս. Ղուկասյան, նշվ. աշխ., էջ 92։

նազուրկ անելու մասին էր, այլ մելիքներին խանի հալածանքներից ազատելու համար Հերակլից կախման մեջ դնելու։ Նման խնդրանքը կարելի է բացատրել նաև նրանով, որ 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրով Հերակլը համարվում էր Ռուսաստանի հովանավորության տակ և մելիքներին նրա ենթակայության ներքո դնելը, փաստորեն, վերջիններիս վրա ևս կտարածեր Ռուսաստանի հովանավորությունը և կարող էր նրանց զերծ պահել Իբրահիմի ոտնձգություններից։

Ղարաբաղի հայերի վիճակով մտահոգված էր նաև ռուսական արքունիքը և, որպեսզի նրանց ազատեին Իբրահիմի վրեժխնդրությունից, հարկ էր համարվում արտաքուստ սիրաշահել խանին. «...Ինչպես ինքը (Իբրահիմ խանը—Ս. Ղ.), այնպես էլ բոլոր պարսիկները սաստիկ վախի մեջ են, և որպեսզի չհասցվի նա ծայրահեղության և չմղվի նրան, որ վախից փախչի կամ զինվի, քանի որ առաջին դեպքում նա չի հապաղի կողոպտել բոլոր հայերին, իսկ երկրորդ դեպքում անարդյունք դիմադրությամբ նրանց կզոհաբերի, ես ճիշտ համարեցի արտահայտել նրան գոհունակություն և սիրալիրություն...»[29], գրում էր Պ. Պոտյոմկինը Գ. Պոտյոմկինին 1783 թ. օգոստոսի 5-ին։ Իսկ որ Գ. Պոտյոմկինը Ղարաբաղի հարցում շարունակում էր նույն դիրքորոշմանը մնալ, ցույց է տալիս 1784 թ. ապրիլի 6-ի կայսրուհուն ուղղած նրա զեկուցագիրը։ Նա կրկին ընդգծում էր, որ Ղարաբաղի իշխողը պետք է լինի քրիստոնյա և որ այդ մարզի վերաբերյալ ինքը հատուկ ծրագրեր ունի, որոնց մասին տեղյակ կպահի կայսրուհուն. «Իբրահիմ խանը վախենալով իր բռնի իշխանությունից բաց թողնել այս ժողովուրդը, ուզում է միանալ Ռուսաստանին։ Բայց քանի որ այնտեղի իշխողը բարձրագույն մտադրության համաձայն պետք է քրիստոնյա լինի, բայց ոչ ինքը, ես նրա պահանջին հրամայեցի պատասխանել, թե այդ մասին կզեկուցեմ ձերդ կայսերական մեծությանը, մինչդեռ բախտ կունենամ իմ վերադարձին ներկայացնել հայկական մարզի հաստատման ամենալավ ձևը»[30]։ Ինչպես երևում է նամակից, Ղարաբաղի իշխողի քրիստոնյա լինելու անհրաժեշտությունը եղել է նաև կայսրուհու մտադրությունը։ Սակայն 1784—1785 թթ. ևս սպասված օգնությունը չեկավ։ Այդ ընթացքում Գ. Պոտյոմկինը աշխատում էր պարսից Ալի-Մուրադ խանի հետ բանակցությունների միջոցով հասնել նրան, որպեսզի խանը Ռուսաստանին կամովին զիջեր մի շարք շրջաններ, այդ թվում Արևելյան Հայաստանը, որպես Ռուսաստանի կողմից իրեն շահ ճանաչելու հատուցում։ Բայց այդ բանակցությունները չկայացան Ալի-Մուրադ խանի մահվան պատճառով[31]։ Իսկ 1785 թ. Պոտյոմկինը զբաղված էր հյուսիսային Կովկասում Շեյխ Մանսուրի ղեկավարությամբ բռնկված ապստամբությունը ճնշելով։ Եվ մինչ Ղարաբաղի վերաբերյալ ծրագրերը մնում էին թղթի վրա, Իբրահիմ խանը ավելի էր սաստկացնում իր հալածանքները մելիքների և Հովհաննես կաթողիկոսի նկատմամբ, քանի որ, տեղյակ լինելով Պոտյոմկինի հետ նրանց կապերին, լավ էր հասկանում, որ դրանք վերջին հաշվով իր դեմ էին ուղղված։ 1784 թ. մայիսի 10-ի նամակով Հովհաննես կաթողիկոսը Պ. Պոտյոմկինին տեղյակ էր պահում, որ Իբրահիմ խանին հայտնել էին, թե մելիքները մարդ և գիր են ուղարկում Պ. Պոտյոմկինի մոտ, որը կատաղեցնում է առանց այն էլ նման կասկածներ ունեցող խանին, դառնալով մելիքների նկատմամբ նոր հալածանքների պատճառ[32]։ Արցախը, որ մշտական կապ էր պահպանում մելիքների հետ և լավատեղյակ էր Արցախում կատարվող դեպքերին, որոնք, ի դեպ, լայնորեն արտացոլվել են նրա նամակներում, 1785 թ. գրում էր. «Յունիսի մուտն Յովհաննէս կաթուղիկոսէն գիր առի, այժմ զանազան վիշտս իւրեանց գրէ, զոր կրեալ են և այժմոյս անդորր գոլն։ Եւ նոյն արիական հոգով

---

29 Армяно-русские отношения, IV, с. 255.

30 Նույն տեղում, էջ 299։

31 Տե՛ս А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 122—135.

32 Армяно-русские отношения, IV, с. 304.

սպասելն յոյսոյն...։ Գրած է, թէ հոգիք մեր կցեալ են ընդ բանս մեր, միայն թէ գիր չեմք կարող այժմ գրել ոչ մեծամեծացն և ոչ պարոն Ստեփանին, զոր ինչ առնես, մեզ ընդունելի է»[83]։ Չնայած բազմիցս հուսախաբություններին և Իբրահիմի հետապնդումներին, մելիքները, այլ ելք չունենալով, շարունակում էին իրենց հույսը կապել Ռուսաստանի հետ։ Բերված հատվածը ցույց է տալիս նաև, որ նրանք այնքան էին վստահում Արղությանին, որ վերջինիս իրավունք էին վերապահում իրենց անունից հանդես դալ ռուսական կառավարության առջև։ Բայց, չնայած Արղությանի եռանդագին ջանքերին, հարցը տեղից չէր շարժվում. «...անբախտ ազգի մերոյ բանն մնաց և մնայ տակաւին անկատար։ ...Սոքա (մելիքները—Ս. Ղ.) բազմիցս գրեցին կայսերուհոյն, խնամակալին մերոյ պայծառափայլ քնեազ Գրիգոր Ալեքսանդրովիչ Պոտեմկինին և զօրապետ Պաւլ Սարգեիչ Պոտեմկինին և մեզ ի տկարս, սակայն դեռ մինչև ցայսօր ոչ ինչ կարգաւորութիւն ոչ է եղեալ, թէպէտ իսօսակցութիւն՝ բազում, սակայն ոչ պակասեցուցանեն զյոյս մեր, այլ ասեն գոյն ինչ համբերել», գրում էր Արղությանը Շ. Շահամիրյանին 1785 թ. սեպտեմբերի 10-ին[84]։

1787 թ. սեպտեմբերին Հերակլի կողմից Իբրահիմի վրա սպասվող արշավանքը, որի նպատակը խանի դեմ ապստամբած մելիքներ Արովին և Մեջլումին իրենց հպատակներով Ղարաբաղից դուրս բերելը և Վրաստանում վերաբնակեցնելն էր, նույնպես ձախողվեց՝ Հերակլին ուղեկցող ռուսական ջոկատին ուղղված եղդարձի հրամանի պատճառով[85]։ Հայտնվելով անելանելի վիճակում, մելիքները ստիպված լքեցին իրենց հայրենի կալվածքները և տարագիրներ դարձան։ «Ի Ղարաբաղ եղեալ մելիքն մեր՝ որդիքն մելի[ք]ացն Ադամայ և Յովսեփի՝ մելիք Մեջլումն և մելիք Ասլովն ի բռնութենէ և ի սաստիկ տիրապետութենէ բռնաւորին իւրեանց՝ Շուշու խան կոչեցելոյն, վտարանդի լեալք ի բուն հայրենեաց իւրեանց՝ ոմամբք հպատակօք իւրեանց, մելիք Մեջլումն ի Թիֆլիզ դեգերի և մելիք Ասլովն ի Գէնջայ, իսկ մնացեալ երկիրն և ժողովուրդք նոցին ցրուեալ են ի լամենայն իշխանութիւնս Շուշու խանին»[86], գրում էր Արղությանը 1790 թ. հունվարի 22-ին Հնդկաստանի հայ համայնքին ուղղված նամակում։ Իբրահիմին իշխանազուրկ չանելու խնդրի հետ կապված հետաքրքիր է Արղությանի հետևյալ բացատրությունը, որի հետ Ա. Ռ. Հովհաննիսյանը համաձայն չէ[87], բայց մեր կարծիքով հարցը հետագա ուսումնասիրության կարիք ունի։ Մելիքներ Մեջլումին և Արովին ուղղված նամակում Արղությանը գրում է. «...Կամէին սոքա (ռուս գործիչները—Ս. Ղ.) զիշխողն ձեր (Իբրահիմ խանին—Ս. Ղ.) բառնալ և զձեզ ի տեղի նորա հաստատել, սակայն յայնժամ նորին արքայական բարձրութիւնն (Հերակլ II-ը—Ս. Ղ.) բարեկամ գոլով ընդ նմայ, արգել և ոչ եթող թոյլ, թէպէտ և քնեազին ընդդէմ էր դրեցեալն նորա. և այժմ ևս վերաւորութեանն գլխաւոր մի պատճառն այս է, ինչ օգուտ, որ ինքն ևս արքայն գիտայ անօրէնութիւնն նորա ապա յետ քանդման ձերոյ»[88]։ Պ. Պոտյոմկինին ուղղված 1784 թ. փետրվարի 25-ի նամակում Հերակլը հետևյալ բացատրությունն էր տալիս Իբրահիմ խանի հետ իր դաշնակից լինելուն. «...Ձերդ գերազանցությունը բարեհաճել է իր նամակում հարցնել մեզ Իբրահիմ խանի հետ մեր դաշինքի պատճառի մասին... Նախ և առաջ Իբրահիմ խանի մասին անհրաժեշտ եմ համարում հավաստել Ձերդ գերազանցությանը, որ նա ավելի եռանդուն և մյուս բոլոր խաներից ավելի լավ կարող է ծառայել նորին կայսերական մեծությանը։ ...Մինչ այսօր Իբրահիմ խանը միշտ հավատարիմ է եղել մեզ, և եթե

---

83 ՄՄ, ձեռ. № 4496, թ. 325։

84 Армяно-русские отношения, IV, с. 335—336.

85 Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 357—358, 374—375։ Հասկանալի է, որ հայ բնակչության դուրս բերումը Ղարաբաղից հանգեցնելու էր մարդի հայաթափմանը։

86 ՄՄ, ձեռ. № 2949, թ. 292։

87 Տե՛ս А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 103.

88 ՄՄ, ձեռ. № 2699, թ. 154։

(որը մենք չենք կարող սայաել)... ցանկանա հակադրվել, մենք միշտ միջոց ունենք սանձելու նրան. երբ նորին կայսերական մեծությանը հաճելի լինի հրամայել»[39]։ Պարզվում է, որ Հերակլը իրոք բարեխոսել է իր «բարեկամի համար» Պոտյոմկինի առջև, այլ հարց է, թե որքանով է դա նպաստել խանին իշխանազուրկ չանելուն։ Դրանից ընդամենը երկու ամիս անց, երբ խոխտելով թագավորի հետ պայմանավորվածությունը Իբրահիմը մերժեց Գանձակի գերված խանին հանձնել Հերակլին, վերջինս «փոխեց» իր կարծիքը խանի մասին, նշելով, որ Իբրահիմը «...պարսիկ է և ուրեմն չի կարելի հույս դնել նրա հավատարմության վրա»[40]։ Բոլոր դեպքերում դժվար է չհամաձայնվել, որ Իբրահիմի հետ Հերակլի բարեկամությունը չէր կարող իր բացասական դերը չխաղալ խանի դեմ մելիքների պայքարում։ Ինչևիցե, Գ. Պոտյոմկինի վարած անհետևողական և ձգձգվող քաղաքականությունը մի կողմից, մյուս կողմից Ռուսաստանի օգնության ակնկալմամբ սեփական հնարավորությունները բացառելը և չօգտագործելը, ճակատագրական եղան մելիքների համար և թույլ տվեցին Իբրահիմ խանին էլ ավելի ուժեղացնել իր ազդեցությունը Ղարաբաղում։ Պատահական չէր, որ մելիքությունների թուլանալը և աստիճանաբար Իբրահիմից կախման մեջ ընկնելը Արդությանը բացատրում էր նաև խանի նկատմամբ երիտասարդ մելիքների տածած երկյուղով. «...Արցախու մեծամեծ իշխանքն ամենեքեան փոխեցան, այժմոյս եղեալքն մանկունք են և ընդ երկիւղի զսպեալք», գրում էր նա[41]։

Հայկական թագավորության վերականգնման հարցը ուղղակիորեն կապված է Երևանի հարցի հետ, որին և, բնականաբար, չենք կարող չանդրադառնալ։ 1784 թ. սեպտեմբերի 10-ին Պ. Պոտյոմկինի միջոցով Երևանի հայությունը ևս դիմեց կայսրուհուն և Գ. Պոտյոմկինին օգնության խնդրանքով. «...զարթեան և բնակիչքն Արարատեան և ցանկան ի ձեռն ձերոյ պայծառափայլութեան բարի միջնորդութեամբն ազատիլ ի դառն ծառայութենէ նեղչաց իւրեանց, զանկեալ թագն կանգնել և վերստին նորոգել զմանկութիւն ազատութեան իւրեանց...»[42], գրում էր Արդությանը Գ. Պոտյոմկինին՝ հաստատելով մահմեդական տիրապետությունից ազատագրվելու և հայկական պետականությունը վերականգնված տեսնելու արարատյան հայության ձգտումը։ 1783 թ. մայիսի 21-ին Ս. Բուենաշին տված հրահանգում խոսելով դեպի Երևան ռուսական զորքի առաջխաղացման հետ կապված խնդիրների մասին, Պ. Պոտյոմկինը նշում էր, որ Երևանում «բոլոր գործերի ամենագլխավոր... շրջադարձը պետք է հետևի»[43]։ Սա նշանակում է, որ Պոտյոմկինը կարևոր նշանակություն էր տալիս Երևանի գրավմանը՝ դա համարելով լուրջ իրադարձությունների սկիզբ։ Շուտով, Գ. Պոտյոմկինին ուղղված զեկուցագրում Պ. Պոտյոմկինը հարցնում էր. «Երբ գործը հասնի Հայաստանին, Երևանը և նրա մարզը պետք է ճանաչել Հայաստանի ընդհանուր կազմի մե՞ջ, թե հաստատել այն որպես վրացական թագավորությանը պատկանող։ Առաջին դեպքում պետք է ենթադրել, որ թագավորը այդ մարզին համարժեք հատուցում կխնդրի, իսկ երկրորդ դեպքում հարկ կլինի թագավորի իշխանությունը ամուր հիմքերի վրա դնել»[44]։ Օգտագործելով Երևանի խանի Վրաստանին հարկատու լինելու փաստը, Հերակլը ռուսական կառավարության առջև մշտապես շեշտում էր Երևանի նկատմամբ իր «իրավունքների» մասին, որն էլ պատճառ էր հանդիսանում, որպեսզի Պոտյոմկինը նման հարց բարձրացներ։ Միևնույն

---

39 Центральный Государственный Архив Древних Актов (ЦГАДА), ф. 23, д. 13, часть 3/2, л. 92.

40 А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 103.

41 Армяно-русские отношения, IV, с. 336.

42 Նույն տեղում, էջ 321։

43 Նույն տեղում, էջ 241։

44 А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 250.

ժամանակ, լավ իմանալով, որ դա բուն հայկական տարածք է, Պոտյոմկինը հարցնում էր Երևանի փոխարեն Հերակլին այլ, համապատասխան հատուցում տալու մասին, բնական համարելով, որ Երևանը մնա ապագա Հայաստանի կազմում։ Հայտնի չէ, թե ինչ է պատասխանել Գ. Պոտյոմկինը այդ հարցին կամ արդյո՞ք պատասխանել է։ Բայց հայտնի է, որ 1796 թ. արշավանքի ժամանակ Վ. Զուբովի Ա. Ռիմսկի-Կորսակովին տված հրահանգի համաձայն նախատեսվում էր Երևանը միացնել Վրաստանին, իսկ Ղարաբաղի մելիքներն էլ պետք է կախման մեջ դրվեին վրաց թագավորից։ Եկատերինա II-ի հրովարտակում էլ նշվում էր, որ արշավանքի նպատակներից մեկը «Հայաստանի վերականգնումն» էր[45]։

Գուցե այդպիսի լուծումը ստեղծված պայմաններում ինչ-որ չափով ընդունելի համարվեր, քանի որ, ինչպես արդեն նշվել է, մելիքները Ռուսաստանից բացի ակնկալիքներ ունեին նաև վրաց թագավորից և այլ ելք չտեսնելով դեռևս 1784 թ. Արղությանի միջոցով հենց իրենք էին նման խնդրանքով դիմել ռուսական կառավարությանը։ Սակայն, հասկանալի է, որ դա չէր կարող էապես բավարարել հայ ժողովրդին և չէր համապատասխանում Ռուսաստանի հետ կապած նրա հույսերին։ Իսկ թե ինչ ճակատագիր ունեցավ Երևանի և Ղարաբաղի խնդիրը 80-ական թթ. և ինչ հաջողվեց անել հայության կողմից Պետերբուրգ ուղարկված Ստեփան Դավթյանին, երևում է 1786 թ. սեպտեմբերի 3-ի Շ. Շահամիրյանին գրած Արղությանի նամակից. «Իսկ ի Հայաստանա հասարակութենէն զանխլաբար առաքեալ եղև ազնիւ պարոն Ստեփաննն տէր Սահակեան Գեղամացի... որ այժմ դեռ ի դրունս կայսերն ի Սանկթ Պետերբուրգ դեգերեալ կայ։ Երկու ամ յուսադրեն և պահեն, զկատարածն գործոյ նորա չգիտեմք»[46]։

Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ չնայած 1780-ական թթ. Գ. Պոտյոմկինի նախաձեռնությամբ հայկական թագավորությունը վերականգնելու նպատակով արշավանքը տեղի չունեցավ, սակայն Պոտյոմկինը պաշտպանում էր Ռուսաստանի գերիշխանության տակ հայկական պետության վերականգնման գաղափարը, որին կողմնակից էր նաև Եկատերինա II կայսրուհին։ Պոտյոմկինի այդ դիրքորոշումը, ինչպես նաև նրա վերաբերմունքը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ արտահայտվել է Արղությանի մի շարք նամակներում։ Ահա դրանցից մեկը. «Բաւական յայտնի են մեզ, և ամենայն ազգի մերում ձերդ պայծառափայլութեան գութ և խնամք առ անկեալ ազգս հայոց, որ երբեմն էր հռչակաւոր յամենայն աշխարհի, որոյ կանգնման բաղձանք միշտ է ի սրբագնեալ հոգի ձեր, ուստի մեք ոչ դադարիմք զարիութիւն հոգւոյ ձերոյ՝ ոչ հռչակել ի յազգս մեր և զհուր սիրոյ ձերոյ՝ արկանել ի հոգի նոցա բորբոքել և տենչալ փափաքելի փրկութեան իւրեանց և համապատասխանել ձեր բարեմիտ կարգաւորութեան, լինել ընդ հզոր ձեռամբ և հովանաւորութեամբ՝ օգոստափառ և մարդասէր փրկչանման իմաստնոյն մեծին Եկատարինէի»[47]։ Այդ տեսակետից Գ. Պոտյոմկինի աջակցությամբ 1791 թ. Ռուսաստանում հիմնադրված նոր հայկական քաղաք-գաղութը «Գրիգորիոպոլիս» կոչելը ևս պատահական չէր։ Այդ անունը մատնանշում էր Հայաստանի երբեմնի փառքը, որը ցանկանում էր վերականգնված տեսնել Գրիգոր Լուսավորչի անվանակիցը։ Արղությանն իր օրագրությունում պատմում է, որ Պոտյոմկինը հաճախ աղոթում էր Լուսավորչի պատկերի առջև[48]։

Կարևոր է նաև այն, որ Պոտյոմկինը հայկական պետության վերականգնումը նկատի ուներ պատմական Հայաստանի ողջ տարածքի վրա, գտնելով,

---

45 Տե՛ս Н. Ф. Дубровин. История войны и владычества русских на Кавказе. Т. III, СПб., 1886, с. 94.

46 Армяно-русские отношения, IV, с. 338—339.

47 Նույն տեղում, էջ 320—321։

48 Տե՛ս, ՄՄ, ձեռ. N 9647։

որ Հայաստանի այն մասը, որը թուրքական տիրապետության տակ է, «իր բնական մասին պետք է միանա»[49]։ Հայտնի է, որ Պոտյոմկինը տարված էր ոչ միայն հայկական, այլև մի շարք այլ թագավորությունների վերականգնման գաղափարով, ինչպես օրինակ, հունական, գակիական, որը բխում էր «Արևելյան հարց» հայտնի ծրագրից՝ ենթադրելով Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցած երբեմնի հզոր պետությունների և ժողովուրդների վերականգնումը։ Կարծիք կա նաև, որ հայկական թագավորության վերականգնման պայմանների վերաբերյալ իր հայտնի դաշնագրում, որը ինչպես գիտենք մերժվեց ռուսական կառավարության կողմից, բայց որից հետո ևս Գ. Պոտյոմկինը շարունակում էր պաշտպանել Հայաստանի վերականգնման հարցը, Արղությանը Գ. Պոտյոմկինին համարում էր հայոց թագի հնարավոր թեկնածու[50]։ Ինչ վերաբերում է արշավանքի իրականացմանը, ապա, չնայած այն մի քանի անգամ հետաձգվեց, բայց կարելի է ասել բավականին իրական էր թվում, եթե նկատի ունենանք այդ ուղղությամբ տարվող նախապատրաստական աշխատանքը և Գ. Պոտյոմկինի հրահանգներն ու ցուցումները, որոնք մանրամասն տեղ են գտել Ա. Ռ. Հովհաննիսյանի վերոհիշյալ աշխատության մեջ։

Պետք է կարծել, որ եղել են պահեր, երբ Ռուսաստանը նպատակահարմար է գտել ուժեղացնել իր դաշնակիցներին տարածաշրջանում։ Պատահական չէ, որ այդ գաղափարը կապված է ոչ միայն Գ. Պոտյոմկինի անվան հետ, որը իրոք հատուկ վերաբերմունք է ունեցել Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ, այլև Պետրոս I-ի, Եկատերինա II-ի, Ա. Բեղբորոդկոյի, Պավել I-ի, որոնք պաշտպանում էին Ռուսաստանի հարավում որպես Իրանի և Թուրքիայի դեմ պատնեշ հայկական, վրացական և «ալբանական» պետությունների ստեղծման կամ Ռուսաստանի հովանավորությամբ և կայսեր գերագույն իշխանությամբ բարյացակամ իշխողների դաշնակցային պետության գոյության անհրաժեշտության գաղափարը[51]։

Ինչ վերաբերում է հայ ժողովրդին, ապա այդ ժամանակ հայ ազատագրական պայքարը անկում էր ապրում, և հայ ժողովրդի առջև նախ և առաջ ծառացել էր իր ֆիզիկական գոյության ապահովման խնդիրը։ Պատահական չէ, որ կաթողիկոսը, մելիքները և հայությունը ռուսական կառավարությանը դիմելիս նախ և առաջ և գլխավորապես խնդրում էին փրկել իրենց ոչնչացումից և ցանկություն էին հայտնում անցնել Ռուսաստանի տիրապետության տակ[52], և ոչ թե շեշտը դնում էին թագավորության վերականգնման վրա, որը անշուշտ շատ ցանկալի էր յուրաքանչյուր հայի համար։ Պատահական չէ նաև այն, որ Արղությանը, որը հայկական թագավորության վերականգնման ջերմեռանդ կողմնակիցներից էր և ջանք չէր խնայում այդ ուղղությամբ, թերահավատորեն էր վերաբերվում դրա իրականացմանը։ Շահամիրյանին ուղղված նամակում նշելով, որ ինքը համաձայն է նաև ապագա Հայաստանում հանրապետական կարգեր հաստատելու վերաբերյալ Շահամիրյանի ծրագրին, Արղությանը գրում էր, որ գա անիրագործելի էր, քանի որ նախ՝ հայ ժողովրդի մեջ դեռևս չէին արմատավորվել նման գաղափարներ և բացի այդ, եթե Ռուսաստանը ազատագրեր հայ ժողովրդին, ապա «թագավորների օրենքի համաձայն իրեն էր ծառայեցնելու»[52]։

Իրականության սթափ գնահատումը պասսիվության չէր դատապարտում Արղությանին, որը չհրաժարվելով հայկական պետությունը վերականգնված տեսնելու իր երազանքից և հասկանալով, որ ստեղծված պայմաններում միակ փրկությունը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելն էր, և գուցե

---

49 А. Р. Иоаннисян. Указ. соч., с. 281—282.

50 Նույն տեղում, էջ 49։

51 Տե՛ս О. П. Маркова. Указ. соч., с. 188, 190, 294.

52 Տե՛ս Армяно-русские отношения, IV, с. 225, 248, 271 և հտ.։

53 Նույն տեղում էջ 339։

կռահելով հայ ժողովրդի ճակատագրում վերջինիս վերապահված դերը, իր խնդիրն էր համարում վառ պահել Ռուսաստանի նկատմամբ հայրենակիցների տածած հույսերը. «Եվ եթէ վերստին շարժեսցեն զբանս զայս ըստ յառաջագոյն տուեալ յուսոյն, ես ոչ կասիմ ի յաշխատութենէ և ոչ դադարիմ, յորդորեմ հայապունս, ոսոց արժանն իցէ և վարակիմ աշխատել գրով և բանիւ վասն երջանկութեան սիրելի ազգին մերոյ»[54], գրում էր նա։

ВОПРОС ВОССТАНОВЛЕНИЯ АРМЯНСКОГО ЦАРСТВА В ДНЕВНИКАХ И ПИСЬМАХ ИОСИФА АРГУТЯНА

С. Г. ГУКАСЯН

Резюме

Дневники и письма И. Аргутяна являются уникальным источником по истории армяно-русских отношений 80—90-х годов XVIII столетия. В этих документах широко отражен и вопрос о восстановлении армянского государства. Заветная мечта армянского народа и деятелей армянского освободительного движения нашла поддержку влиятельного государственного деятеля России Г. А. Потемкина. Дневник Аргутяна—единственный источник, свидетельствующий о встречах И. Лазаряна и И. Аргутяна с Г. Потемкиным и А. Суворовым, в ходе которых обсуждался вопрос восстановления армянской государственности. Г. Потемкин неоднократно отдавал приказы и инструкции А. Суворову и П. Потемкину в подготовке похода российских войск в Армению. Несмотря на широкую подготовительную работу, этим планам не суждено было осуществиться, что не только горько разочаровало Аргутяна и карабахских меликов, но и резко ухудшило ситуацию в Карабахе. Аргутян, который являлся представителем и посредником меликов и араратских армян перед русским двором, был хорошо осведомлен о сложившейся ситуации и в своих письмах подробно осветил все события. Этот источник интересен и тем, что в нем ярко выражен тот факт, что несмотря на периодические отсрочки решения этого вопроса российским правительством, Аргутян и остальные деятели армянского освободительного движения, не видя другого пути, продолжали связывать свои надежды о помощи с Россией.

54 Նույն տեղում, էջ 340։